**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ**
«ՎԻՆԻ» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն՝

_________________

Վահան Մանուկյան
«     » ____________ 20__

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
NO ONE հավատարմության ծրագիր

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1.1 Սույն կանոնները որոշում են «ՎԻՆԻ» ՍՊԸ-ի մասնակցության պայմանները հավատարմության ծրագրում (այսուհետ՝ «NO ONE»)

1.2 Հավատարմության ծրագիրը գործում է NO ONE փիրմային բուտիկում և NO ONE ինտերնետ-խանութում հետևյալ հասցեով՝ www.noone.am:

1.3 Հավատարմության ծրագրում մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել ծրագրում (տես՝ կ. 4.1) և ստանալ NO ONE հավատարմության ծրագրի քարտ (այսուհետ՝ «Քարտ») (տես՝ կ. 3.2):

1.4 Քարտի ակտիվացումը և/կամ Քարտի օգտագործումը նշանակում է, որ հավատարմության ծրագրի Մասնակիցը ծանոթացել է սույն կանոններին, արտահայտում է իր համաձայնությունը մասնակցել հավատարմության ծրագրում և պարտավորվում պահպանել դրանք:

1.5 Հավատարմության ծրագրի Քարտը չի հանդիսանում վճարման միջոց: Մարկեթինգային նախաձեռնությունների շրջանակում NO ONE կողմից հաշվեգրելի բոնուսային և այլ միավորները չեն հանդիսանում դրամային միջոցներ և ենթակա չեն փոխանակման դրամային միջոցների:

1.6 NO ONE ունի իրավունք միակողմանի փոխել սույն կանոնակարգը, նույնիսկ մինչև հավատարմության ծրագրի չեղարկումը:

2. NO ONE ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՍՏԱՑՈՒՄԸ

2.1 Քարտը տրվում է ցանկացած հաճախորդի, ով կատարել է առնվազն մեկ գնում NO ONE բուտիկում կամ գրանցվել է www.noone.am կայքում:

Քարտ ստանալու պարտադիր պայմաններն են հարցաթերիկի լրացումը և անձնական տվյալների մշակման համաձայնությունը:

2.2 Առանց գնում կատարելու զրոյական զեղչի քարտերը անհրաժեշտ է ակտիվացնել: Քարտն ակտիվացնելու համար անհրաժեշտ է տվյալ քարտի օգտագործմամբ կատարել ցանկացած գնում:

2.3 NO ONE ունի իրավունք, միակողմանի, առանց բացատրության, մերժել հաճախորդին տրամադրել Քարտը, չեղարկել Քարտը և նրա հետ կապված անձնական հաշվում եղած հաշվեգրերը:

2.4 NO ONE ունի իրավունք չընդունել բողոքը անձից, ով չի լրացրել հարցաթերթիկի պարտադիր դաշտերը:

3. ՔԱՐՏԻ ՏԻՊԸ

3.1 Թողարկվում են մեկ տիպի քարտեր՝ էլեկտրոնային զեղչի քարտ, որն ունի փոփոխվող զեղչի մակարդակ (զեղչի մակարդակի փոփոխման դինամիկան տես՝ կ. 5.6.1):

3.2 Քարտը գործում է այն ներկայացնողի հանդեպ:

3.3 Քարտը կորցնելու դեպքում Քարտի կրողը կարող է դիմել NO ONE բուտիկ կամ զանգահարել +374 (10) 30 30 60 հեռախոսահամարով: Կորցրած քարտը կարգեկափակվի, իսկ հաճախորդին կտրվի նոր Քարտ:

3.4 Քարտը վերաթողարկելու դեպքում զեղչի մակարդակի և անձնական հաշվում կուտակված գումարի մասին տեղեկատվությունը կփոխանցվի նոր Քարտի վրա:

4. ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

4.1 NO ONE հավատարմության ծրագրի մասնակիցը դառնում է ցանկացած հաճախորդ, որն անցել է գրանցում և ստացել NO ONE հավատարմության քարտ: Անհրաժեշտ է լրացնել հարցաթերթիկը և տալ համաձայնություն անձնական տվյալների մշակմանը:

5. NO ONE ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

5.1 Հավատարմության ծրագրում գրանցվելիս Մասնակցի համար ստեղծվում են անձնական հաշիվ և բոնուսային հաշիվ:

5.2 Անձնական հաշիվ՝

Հաշիվ, որի վրա գումարվում են Մասնակցի կողմից Քարտով կատարված բոլոր գնումները՝ NO ONE բուտիկում և NO ONE ինտերնետ-խանությունն հետևյալ հասցեով՝ www.noone.am:

Մասնակցին տրամադրվում է զեղչ, կապված նրա անձնական հաշվում կուտակած գումարից (տես՝ կ. 5.6.1):

5.3 Բոնուսային հաշիվ՝

Հաշիվ, որի վրա գումարվում են բոլոր բոնուսները, կուտակված NO ONE բուտիկում և NO ONE ինտերնետ-խանութում հետևյալ հասցեով՝ www.noone.am, կատարած գնումների համար:

Բոնուսներով կարելի է վճարել գնման արժեքի մինչև 50% NO ONE բուտիկում և NO ONE ինտերնետ-խանութում հետևյալ հասցեով՝ www.noone.am:

5.4 Ապրանքը վերադարձնելու դեպքում, այդ գնումից կուտակված բոնուսների արժեքը հաշվի վրա նվազում է համաչափ վերադարձված ապրանքի գումարի:

5.5 Քարտով զեղչեր տրամադրելու և բոնուսներ կուտակելու կարգը՝

Քարտով զեղչը տրամադրվում է հետևյալ դեպքերում, երբ

- բացակայում է ապրանքի զեղչը;

- Քարտով զեղչը գերազանցում է ապրանքի զեղչը:

Բոնուսները կուտակվում են հետևյալ դեպքերում, երբ

- ապրանքի զեղչը գերազանցում է Քարտով զեղչի մակարդակը;
- ապրանքի զեղչը հավասար է Քարտով զեղչի մակարդակին:

Զրոյական զեղչով քարտերի համար բոնուսները կուտակվում են այն դեպքում, երբ ապրանքը ձեռք բերվում է զեղչով:

Ապրանքի զեղչը՝ այն զեղչն է, որը սահմանում է NO ONE ընկերությունը ապրանքների սեզոնային վերագնահատման շրջանակներում:

5.6 Քարտով զեղչի մակարդակը՝

Հավատարմության ծրագրի Մասնակցի զեղչի չափը որոշվում է համապատասխան անձնական հաշվում եղած գնումների ընթացիկ գումարի, գնումների գումարը զեղչի մակարդակի համապատասխանության սանդղակով՝

| Անձնական հաշվում գնումների գումարը | Զեղչ, % |
|---|---|
| до 259 999 | 0 |
| от 260 000 до 519 999 | 5 |
| от 520 000 до 779 999 | 6 |
| от 780 000 до 1 099 999 | 7 |
| от 1 100 000 до 1 499 999 | 8 |
| от 1 500 000 до 2 199 999 | 9 |
| от 2 200 000 до 3 499 999 | 10 |
| от 3 500 000 до 5 199 999 | 12 |
| от 5 200 000 | 15 |

260 000 AMD և 2 200 000 AMD կուտակելիս հաճախորդի զեղչը ֆիքսվում է 5% և 10% համապատասխանաբար: Այսպիսով, 5% և 10% զեղչերը չեն նվազում անկախ պայմաններից, թվարկված 5.6.6 կետում:

Հավատարմային քարտի օգտագործմամբ գումարային զեղչը չի կարող գերազանցել զեղչի սահմանային շեմը, սահմանված օգտագործման պահին NO ONE ընկերության կողմից: Զեղչի սահմանային շեմը՝ ապրանքների զեղչի առավելագույն մակարդակն է, որը տրամադրվում է բոլոր զեղչերի կիրառումից հետո:

Զեղչի վավերության ժամկետը կազմում է 1 տարի սկսած վերջին գնումը կատարելու օրվանից:

Զեղչը գործում է 1 տարի ցանկացած ապրանքի վերջին գնումը կատարելու օրվանից NO ONE ցանցի ցանկացած խանութից, այդ թվում ցանցի առւտլետներից NO ONE՝ Քարտի ներկայացմամբ:

Համապատասխան 5.6.1 կետի, եթե վերջին գնումը կատարելու պահից 1 տարվա ընթացքում չի կատարվել ոչ մի գնում, ապա զեղչի մակարդակը նվազում է մինչև զեղչի նախորդ մակարդակը, նվազեցնելով Քարտի անձնական հաշվի գումարը մինչև նվազագույն մակարդակը, սահմանված զեղչի նախորդ մակարդակի համար: Զեղչի մակարդակի նվազումը

կատարվում է ավտոմատ ռեժիմում Քարտի օգտագործմամբ գնումներ անցկացնելու պահից 1 տարին լրանալու հաջորդ օրը:

5.7 Բոնուսային միավորներ՝

Բոնուսային միավորները կուտակվում են կախված զեղչի մակարդակից՝

| Քարտով անվանական զեղչեր, % | Կուտակվող բոնուսներ, % |
|---|---|
| 0 | 3 |
| 5-12 | 5 |
| 15 | 7 |

Բոնուսները կուտակվում են կտրոնում վճարված գումարի չափով:

Բոնուսային միավորներով կարելի է վճարել մինչև գնման գումարի 50%:

Բոնուսային միավորները վավեր են կուտակման պահից 1 տարվա ընթացքում:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՎԵՐԱԴԱՐՁ

6.1 Ապրանքների փոխանակումը և վերադարձը, ձեռքբերված NO ONE բուտիկում և NO ONE ինտերնետ-խանութում հետևյալ հասցեով՝ www.noone.am իրականացվում է ընդհանուր կարգով, համաձայն Հայաստանի Հանրապետության «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

6.2 Ապրանքները վերադարձնելիս (ամբողջությամբ կամ մասնակի) զեղչի մակարդակը և/կամ բոնուսային հաշվի կուտակումները նվազում են համապատասխան տվյալ գնումների կուտակումների:

6.3 Ապրանքները վերադարձնելիս (ամբողջությամբ կամ մասնակի), վճարված բոնուսների օգնությամբ, օգտագործված բոնուսների գումարը վերականգնվում է անձնական հաշվի վրա վերականգնման պահից 30 օրացուցային օրով:

7. ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԱԿՑԻԱՆԵՐ

7.1 NO ONE կողմից կազմակերպվող գովազդային ակցիաների, վաճառքների և այլնի ժամանակ Քարտով զեղչը որոշվում է լրացուցիչ պայմաններով, որոնք յուրաքանչյուր առանձին դեպքում սահմանվում են NO ONE աշխատակազմի կողմից:

7.2 Քարտի օգտագործմամբ ապրանքների առանձին խումբ ձեռքբերելիս NO ONE աշխատակազմը կարող է սահմանել լրացուցիչ պայմաններ:

7.3 Լրացուցիչ պայմանների մասին տեղեկատվությունը կարելի է ստանալ NO ONE բուտիկում

+ 374 (10) 30 30 60 հեռախոսահամարով

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 NO ONE հավատարմության ծրագիրը հանդիսանում է խրախուսական ակցիա և «ՎԻՆԻ» ՍՊԸ-ի բացառապես նախաձեռնությունը, այն չի հանդիսանում օֆերտայի պայմանագիր:

8.2 NO ONE ընկերությունը թողնում է իրեն իրավունքը միակողմանի փոխել սույն Կանոնակարգը, մինչև հավատարմության ծրագրի չեղարկումը, ներառյալ NO ONE բուտիկի և ինտերնետ-խանութի համար հավատարմության ծրագրի պայմանների միակողմանի փոփոխության իրավունքը, որը ձևակերպվում է որպես սույն Կանոնակարգի լրացում:

8.3 Սույն Կանոնակարգի դրույթները գործում են NO ONE բուտիկում և NO ONE ինտերնետ-խանութում հետևյալ հասցեով՝ www.noone.am: NO ONE ընկերությունը չի կրում պատասխանատվություն Մասնակիցների կողմից սույն կանոնների չիմացության համար: